

գրել է Նորին Օծութեան, որ մեր կալուածները կվերադարձուին և ուսումնարանները կվերաբացուին մինչև առաջիկայ սեպտեմբեր և Վեհը խնդրել է փութացնել այդ մասին ժողով կազմել, ուր ինքը կուղարկէ իւր լիազօրները և կհերկայացնէ կարևոր թղթերը այդ խնդիրներին նկատմամբ:

■ Անցեալ յունիսի 17-ին, ս. Գրիգոր Լուսաւորչի վերապից դուրս գալու սօնի օրը Ազգիս ծերունագարդ Հայրապետ Տ. Տ. Մկրտիչ Ա.-ը եպիսկոպոսական աստիճանի վերակոչեց նորերս ս. Պաշ վանքից վերադարձած Տ. Նահապետ և Արցախի թեմի նորահաստատ առաջնորդ Տ. Աշոտ վարդապետներին: Նորընծայ Տ. Նահապետ եպիսկոպոսը. Մայր Աթոռի այժմեան ճեմարանական վարդապետների հայրը, անդրանիկ ս. պատարագ մատուցանելով իջման սեղանուս, Վեհ. շքախմբի հետ ժամանեց Թիֆլիս, իսկ Տ. Աշոտ եպիսկոպոսը մի շաբաթ յետոյ ուղևորուեցաւ Ս. Էջմիածնից և այժմս գտնուում է Թիֆլիս, ուր հոգում է իւր թեմի մի քանի խիստ կարևոր խնդիրները բարեյաջող լուծումն ստանալ և ապա ուղևորուել Շուշի:

■ Տարի ու կէսուայ ակամայ դադարուից յետոյ՝ ամսոյս 3-ին, կիւրակի օրը, լոյս տեսաւ «Նոր-Դարի» ներկայ տարուայ առաջին համարը մեծացրած դիրքով և ճոխ բովանդակութեամբ: Նաբարբութիւնը յայտնում է, որ կանոնաւոր բաժանորդագրութիւն ընդունում է առաջիկայ սեպտ. 1-ից և այդ ժամանակից կսկսուի «Նոր-Դարը» կանոնաւոր, շաբաթը վեց անգամ, հրատարակուելի:

Թէ որ աստիճան ժողովուրդը ծարաւի է մի օրինաւոր, բուն հայ ամենօրեայ թերթի, կարելի է դատել նորանով, որ «Նոր-Դարի» այդ № 1-ի 2500 տպուած օրինակները, հատի տակ ծախելով, բոլորը սպառուեցան նոյն իսկ կիւրակի օրը և երկուշաբթի նաբարբութիւնը ստիպուած եղաւ նոյն համարը երկրորդ տպագրութեամբ տպել դարձեալ 2000 օրինակ:

### ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

6 Յունիսի 1905

Գրելու շատ բան կայ. բայց որը գրեմ, որը թողնեմ: Երբ Նախիջևանի դէպքերը տեղի ունեցան, այստեղ սագերը գրգռուեցան. այդ յայտնի բան էր և մենք պէտք է սպասէինք. մի քանի օր մարդիկ մի տեսակ շուարուած դրութեան մէջ էին, չէին իմանում ինչ է կատարուում. յետոյ մի փոքր սթափուեցան ու սկսան քարոզների ետևից ընկնել. թուրքերին քարոզում ու յորդորում էին միանալ, բարեկամանալ մեզ հետ և վերջապէս ճանաչել թշնամուն և բարեկամին: Բազուայ սարսափելի դէպքերի առիթով արդէն հայերը հաւաքուել էին (փետրուար ամսին) թուրքաց գլխաւոր մզկիթը, իսկ թուրքերը եկան հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցին, հոգեհանգիստներ կատարեցին, խօսեցին, համոզեցին իրար, որ մենք իրար հետ համերաշխ կերպով ու բարեկամաբար ապրելուց բացի օգուտը ոչ մի

մնաս չունենք: Կարծես այն ժամանակ մեր մէջ եղած բոլոր թիւրբիմացութիւնները պարզուեցան և մենք իրար հասկացանք, պրծանք. բայց չէ. բանից դուրս եկաւ, որ հրդեհը լաւ չէր հանդիւ և բաւական էր մի փոքր բոց, որ նորից նա նորոգուի. բայց ոչ թէ փոքրիկ բոց, այլ մի ուրիշ հրդեհ նորից ծագեց Նախիջևանում ու ահա մեր հարևանները նորից էին զրգուում. բարեբաղտաբար թուրքերի մէջ կան բաւական թուով բարեմիտ ու բանիմաց մարդիկ և ուսանողներ. սրանք բաւական լաւ գործեցին և այս անգամ էլ երկիւղը հեռացրին Գանձակի հորիզօնի վրայից: Սակայն չանցաւ երկար ժամանակ, նոյն հրդեհը պատահեցաւ և Երևան քաղաքում: Առաջին օրերը անցան անհետևանք, որովհետև լրագրերում քիչ տեղեկութիւններ կային: Բայց երբ թէ լրագրերը և թէ մասնաւոր տեղեկութիւնները յայտնեցին, որ այնտեղ հայերը «յաղթող» են հանդիսացել և թուրքերը շատ են մնասուել—այն ժամանակ այս տեղ իրերի դրութիւնը սաստիկ փոխուեցաւ. նախանցեալ շաբթուայ չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերը կրքերի և դրութեան լարումն զագաթնակէտին էր հասել. ինչպէս ասում են օդի մէջ վառօդի հոտ էր փչում: Երկիւղը պատել էր ամենուրեք. ընդհանուր իրարանցում էր ընկել. հայերը թուրքերից էին վախենում, թուրքերը հայերից: Շատ տներ իրենց թանկագին և առհասարակ բոլոր իրերը թագցնում էին. շատերը փոխադրում էին աւելի ապահով տեղ: Չայն էր պտտում, որ գաւառից ահազին քանակութեամբ զինուած թուրքեր են եկել քաղաքս և հէնց մի նշանի են սպասում, որ յարձակուեն հայերի վրայ: Շատ վաճառականներ իրենց պարանքը բազարից բերում տների մէջ էին թաղցնում. և այս հանգամանքը աւելի շատ էր աչքի ընկնում: Պէտք է ասել որ բազարը (շուկան) ամբողջովին թուրքաց թաղում է ընկած. հայերի բոլոր կարողութիւնն այնտեղ է. և եթէ Աստուած մի արասցէ, Երևանի ու Նախիջևանի դէպքերը այստեղ կրկնուելու լինեն, մի զիջերում հայերը կը զրկուեն իրենց բոլոր ունեցած չունեցածից: Այս այսպէս լինելուց յետոյ—չի կարելի մի կողմից էլ մեղադրել հայերին—որ իրենց պարանքը տներն են քաշում, մանաւանդ որ ոչ մի ապահովութիւն չը կար առաջին օրերը. առաժն ասում է. «սև օձից վախենողը, սև չաթուից էլ է վախենում»... Այսպէս խիստ լարուած դրութիւնը տևեց 3—4 օր: Աստուած կեանք տայ թուրքաց ախուղին և նրանց զազիին. սրանք բաւական լաւ դեր կատարեցին. ժողովուրդին միշտ յայտարարում էին, քարոզում—զպպել իրենց ու հայերի հետ հաշտ ապրել: Նոյնպէս բաւական լաւ գործում է և այստեղի ոստիկանապետ Թեմուր բէկ Հասանբէկովը. անցեալ շաբաթ, այն դրութեան լարումած ժամանակ նա ամբողջ զիջերներ է անքուն անցկացրել թուրքերի թաղերում կառքով ման գալով և միջոցների ձեռնարկելով, որ որևէ ընդհարում տեղի չունենայ հայերի և թուրքերի մէջ: Սրանց ամենքի, ուսանողների և հայ ու թուրք պատուաւոր մարդկանց կողմից կատարած գործը բաւական ազդեց իրերի վրայ և այս անգամ էլ չարիքը տեղի չունեցաւ:

Անցեալ շաբաթ Երևանից եկել է այստեղ մի թուրք, ծածուկ շրջել է թուրքի թաղը և գրգռել ամբոխին հայերի դէմ. այս անձը երևի իւր միսսիան շատ լաւ է կատարել, որովհետեւ դրուժիւնը նորից փոխուեց և երկիւղը նորից տիրեց քաղաքին. հարկաւոր եղաւ նոր յորգորումներ, քարոզներ, բայց մինչև երբ ախր: Որքան անբաղդ մարդիկ ենք մենք հայեր դրուժիւնը սարսափելի է: Երևանից եկած թուրքին ուստիկանութիւնը փնտոեց, բայց չը գտաւ. նորեքս լուր եկաւ, որ նա անցել է Շուշուայ կողմերը և այնտեղ է սերմեր ցանում... Նահանգապետ Լուսնաուին հեռացրին պաշտօնից շատ յանկարծակի կերպով: Փոխ-նահանգապետը մի լաւ մարդ է. երևում է որ նա սրտանց ուզում է որ այստեղ խաղաղ անցնի. ամեն միջոց ձեռք է առնում չարիքի առաջն առնելու: Այստեղ կայ մի կոմիտէտ—80 հոգուց բաղկացած, 40 հայ, 40 թուրք— որը այս գործեր գլուխ է անցած: Կոմիտէտը մի յանձնաժողով է ընտրել իւր միջոց 16 հոգուց բաղկացած. նրանք ամեն գործեր ըննում ու վճռում են. եթէ որևէ խուլիքան, անպիտանի մէկը սուտ լուր է տարածում, կամ գրգռում ժողովրդին, իսկոյն սրանց յանձնում են յանձնաժողովին. նրանք ըննելուց տուգանքի կամ պատժի են ենթարկում յանցաւորներին: Նահանգապետի գիտութեամբ է այս բանը արած և նոյն իսկ նա շատ գործեր յանձնում է յանձնաժողովին: Փոխ-նահանգապետը մի ժողով կազմեց իւր մօտ, ուր խնդրեց խրախուսել ժողովրդին ապրել սիրով, հանգիստ և չարամիտ մարդկանց չը լսել: Ահա այս միջոցների շնորհիւ մինչև այժմ մեր քաղաքում ոչինչ չը կայ. անցեալ շաբաթ մօտակայ Սոյլար-Ղարատաղու գիւղում թուրքերի ու հայերի մէջ թիւրիմացութիւն էր պատահել. իսկոյն այստեղից գնացին երկու աշխարհական, մի քահանայ և մի թուրքի մուլա և ամեն ինչ խաղաղացրին: Իրանից յետոյ մօտակայ մի գիւղում հետեանդ դէպքն է պատահում. Բարնատ գիւղ կայ Գանձանկից մօտ 20—25 վերստի վրայ, բաղկացած մի 50—60 տնից. դրա շուրջը կան 4—5 թուրք գիւղեր: 4—5 օր սրանից առաջ մի անուանի թուրք ծածուկ գալիս է ու այդ գիւղացիներին յայտնում, որ թուրքերի մէջ սաստիկ գրգռոււնք կայ և խօսք ու զրոյց. պատրաստուած են յարձակուել հայերի վրայ, թալանել ու կոտորել: Հայերը իսկոյն մարդիկ են ուղարկում հարևան հայ գիւղերը և ամեն տեղից զինուած հայեր են գնում այն գիւղը: Պատմում են, որ թուրքերը իրենց տաւաղ տանում են ու հայերի արտերի մէջ անում ու ուտեցնում. ասում են, որ այսպէս են անում հայերին կոռուի մէջ ձգելու նպատակով: Այս մասին իսկոյն իմաց տուին և նա հարկաւոր կարգադրութիւն արաւ գաւառապետի ու ոստիկանների միջոցով: Առաջ ձայն ընկաւ որ այս ամենը իբր թէ սուտ բան է, որովհետեւ այնտեղ կոռու է տեղի ունեցել, ուր 2 հայ են սպանուած և մի թուրք, և յիշեալ լուրերը իբր թէ այս բանից է վերցրած. բայց եկաւ Տէր-Յուսիկ Վերդեանցը (որ Քարհատ գիւղացի է) և անձամբ հաստատեց բոլորը: Սեղճ հայերը հիմա են միայն մտածում

ինքնապաշտպանութեան վրայ, իսկ թուրքերը հարիւր տարուց աւելի է զինուած են: Գանձակում ամեն մի թուրքի տանը կը գըտնէք մի քանի ատրճանակ, հրացան, փամփուշաներ: Իսկ մենք... Հիմա էլ հայերը մի հարց են բարցրացրել, ուզում են ամբողջ բազարը քոչեցնել զէպի հայոց թաղը: Բազարում մեծամասնութիւնը անշարժ կայեքը թուրքերին է պատկանում. եթէ հայերը իրենց խանութները փոխադրեն մեր կողմը, նրանց կայքերի արժէքը կընկնի ու մեծ շլաս կունենան: Ահա ընդհանուր կերպով մեր դրութիւնը. տեսնում էք որ շատ էլ նախանձելի դրութիւն չէ: Նահանգապետին խնդրել են որ նա բերել տայ քաղաքումս յամենայն զէպս պահպանելու համար երկու հարիւր կազակ:

Վերջապէս կեանքի ու գոյքի կատարեալ անապահովութիւն. յոյաներս չը պէտք է ուրիշի վրայ դնենք. մենք ինքներս պէտք է մեզ պաշտպանենք: Երկիւղը մշտնջենական է. ամեն ըոպէ կարող է ընդհարումն պատահել, որովհետև զժբաղատաբար այնպիսի մարդկանց հետ գործ ունենք, որոնք ոչ խելք ունին, ոչ զարգացողութիւն, ոչ հեռատեսութիւն. նրանց համար կեանքը արժէք չունի և 10 կոպէկի համար ամեն ինչ պատրաստ են անելու:

ՆՈՐԱՇԵՆՏԻ

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՇՈՒՇԻ. Յ. Խանլարեան.— «Հարաւի այրին», «Յաւալի պատկեր» և «Նաւակ» մեզանից անկախ պատճառներով չենք տպում:

ԲԱԳՈՒ. Մ Բ.— ստացանք Ձեր «Պարբերական մամուլը Արևմուտքում» գրուածքի առաջին երեք մասերը:

ՀԱՂԷ. Յ. Բողեան.— Հէնրիկ Իբսէնի «Երբ մենք մահից յարութիւն առնենք». էպիլոգի հայ թարգմանութիւնը ստացանք:

ՉԱՆԳԵՉՈՒՐ. Գր. Բալասանեան.— Ձեր ուղարկած յօդուածը ստացանք. արդեօք դուք Գրիգոր Բալասանը չէք— «Լումայի» նախկին աշխատակիցը. ցանկալի է որ իմանայինք:

ԱՆԱՊԱ. Մ. Շուտո.— Ստացանք Ձեր ուղարկած թարգմանութիւնները. 1, Կ. Զդէխովսկու «Սարրա». 2, Ի. Լիի «Յինական արիւն» և 3, Պօտապէնկօի «Անիծեալ փառք»: Համաձայն մեր կանոնների՝ դուք պէտք է ուղարկէք նաև դոցա բնագիրները, այսպէս չեն կարգացուիլ:

ԿԱՐՍ. Կայծ.— Ձեր բանաստեղծութիւնները ստացանք. յարմարաւորները կտպուին. մանրամասնութիւնները կգրենք Ձեզ նամակով:

ԲԱԳՈՒ. Ա. Զանեան. Ձեր ուղարկած ոտանաւորները ստացանք:

Խմբագիր-Հրատարակիչ ԳՐԻՅ Ա. ԳԱ. ԱՂԱՆԵՆԱՆ